ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/67, 20.09.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Վերիտաս» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բժշկական սարքավորումների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1» ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե ք. Երևան Մելիք Ադամյան 1
«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Միխիթարյանից
Հասցե Նորապատ 9փ, 3տ., հեռ. 099546900
e-mail: veritasllc1@gmail.com

Պատվիրատու ՀՀ առողջապահության նախարարություն
Հասցե ք. Երևան, Կառավարական տուն N 3

Գնանշման հարցման ընթացակարգի
ծածկագիր ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1
Գնման առարկա՝ բժշկական սարքավորումներ

ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան

1.1 ՀՀ առողջապահության նախարարության կողմից 09.09.2019թ. հայտարարվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1 ընթացակարգը: Գնման առարկա՝ բժշկական սարքավորումներ:

1.2 Սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուի կողմից չի տրամադրվել պարզաբանում՝ մասնակցի կողմից կատարված թվով երկու նույնաբովանդակ հարցումներին:

1.3 Տեխնիկական բնութագրերը կազմված են սխալ, իրենց մեջ պարունակում են գոյություն չունեցող ապրանքներ, նշված չեն պահանջվող պարամետրերի չափման միավորները:

1.4. Նշված ընթացակարգը հայտարարված է ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան՝ մինչդեռ Armeps համակարգում հստակ նշված են ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները, ուստի ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման իրավական հիմքերը բացակայում են:

2. Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

ա) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

բ) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Բողոքի պահանջը՝

Արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/1 ընթացակարգը:

Կից ներկայացվում է

1. Մեր կողմից Armeps համակարգի միջոցով ուղարկված պարզաբանման հարցումը
2. Էլեկտրոնային փոստով ստացված ծանուցումներն այն մասին, որ մենք ուղարկել ենք հարցումներ (jpeg ձևաչափով ֆայլ):
3. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյան

20.09.2019թ.